ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/31

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2018թ. թիվ 04/26-3/4486-18 գրությամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 12.03.2018թ. թիվ 18-3/[1216642]-18 գրության հիման վրա, 14.03.2018թ. թիվ 04/26-3/4486-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Պրիիզմա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Պրիիզմա ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պրիիզմա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Պրիիզմա» ՍՊԸ-ն 2018թ. փետրվար ամսին «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և սահմանված կարգով մասնակցել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգերին և երկու ընթացակարգերում էլ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նշված մարմինների կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարվել է հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ, որոնց ի պատասխան ներկայացված եզրակացությունում «Պրիիզմա» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց պարտավորություն: Ընկերությունը հայտնել է, որ առկա են բոլոր հիմնավորող փաստաթղթերը (տեղեկանք բանկից և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից), որ «Պրիիզմա» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամանակին կատարել է պետության հանդեպ բոլոր պարտավորությունների մարումը, միևնույն ժամանակ հետագայում պարզվել է, որ ծրագրային խնդիրների պատճառով համապատասխան գումարը չի փոխանցվել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին, ինչի պատճառով էլ համակարգը չի զրոյացրել Ընկերության բոլոր հարկային պարտավորությունները:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տվյալ ժամանակաշրջանում «Պրիիզմա» ՍՊԸ-ն իր բանկային հաշվեհամարում ունեցել է գերավճար: ՀՀ հարկային օրենսդրության համաձայն 2018թ. հունվար ամսից գործում է մեկ միասնական հաշվեհամար և տվյալ պարագայում, եթե Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի հանդեպ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ և միաժամանակ գերավճար, որը գումարային արտահայտությամբ շատ ավելի բարձր է քան պարտավորությունները, ապա այդ

պարտավորությունների մարումը պետք է կատարվի ավտոմատ եղանակով՝ համակարգի միջոցով, այլ ոչ թե մարդկային գործոնով պայմանավորված:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է, վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով, որ «Պրիիզմա» ՍՊԸ-ն նորաստեղծ կազմակերպություն է և նոր է փորձում կայանալ պետական գնումների ոլորտում և իր լուման ներդնել պետականության զարգացման ոլորտում, Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և թույլ տալ շարունակելու իր գործունեությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/31 ընթացակարգի շրջանակներում 19.03.2018թ. ժամը 10:50-ին և 26.03.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 26.03.2018թ. ժամը 10:45-ին նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 12.03.2018թ. թիվ 18-3/[1216642]-18 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակից «Պրիիզմա» ՍՊԸ-ի մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան հիսուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/31 ընթացակարգի շրջանակներում 19.03.2018թ. ժամը 10:50-ին և 26.03.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/31 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/31 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 09.02.2018թ. հայտ է ներկայացրել «Պրիիզմա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է ***գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 95 000 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 12.02.2018թ. ժամը 17:50-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Պրիիզմա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 45 188 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

7. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Պրիիզմա» ՍՊԸ-ի համար 17.11.2017թ. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացվել է օնլայն համակարգ, սակայն Բանկի աշխատակցի սխալի պատճառով Օնլայն համակարգի ռեժիմը Գործարքների կատարման փոխարեն նշվել է Գործարքների դիտարկման, ինչի արդյունքում

հաճախորդի կողմից ***07.02.2018թ. ձևավորված 80 000 ՀՀ դրամ 900008000490 հաշվեհամարին փոխանցման հանձնարարականը չի հաստատվել Բանկի կողմից մինչև 26.02.2018թ.:***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.03.2018թ. թիվ 18-3/[1216642]-18 և 14.03.2018թ. գրությունները և կից փաստաթղթերը, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկատվությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***09.02.2018թ.*** հայտ է ներկայացրել «Պրիիզմա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է ***գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 95 000 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 12.02.2018թ. ժամը 17:50-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 13.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Պրիիզմա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Պրիիզմա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 45 188 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2018/31 ընթացակարգի քննության շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված համապատասխան տեղեկատվությունը, որի համաձայն «Պրիիզմա» ՍՊԸ-ի համար 17.11.2017թ. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացվել է օնլայն համակարգ, սակայն Բանկի աշխատակցի սխալի պատճառով Օնլայն համակարգի ռեժիմը Գործարքների կատարման փոխարեն նշվել է Գործարքների դիտարկման, ինչի արդյունքում հաճախորդի կողմից ***07.02.2018թ. ձևավորված 80 000 ՀՀ դրամ 900008000490 հաշվեհամարին փոխանցման հանձնարարականը չի հասցվել Բանկի կողմից մինչև 26.02.2018թ.:***

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***45 188 ՀՀ դրամի չափով***, որը գերազանցում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Միևնույն ժամանակ

արձանագրում եմ, որ համաձայն «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվության՝ ***«Պրիիզմա» ՍՊԸ-ն դեռևս 07.02.2018թ. բանկի օնլայն համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ձևավորել է <u>80 000 ՀՀ դրամ հարկերի միասնական 900008000490 հաշվեհամարին</u> փոխանցման հանձնարարականը, որը սակայն Բանկի կողմից՝ վերջինիս աշխատակցի մեղքով չի հաստատվել մինչև 26.02.2018թ.:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ «Պրիիզմա» ՍՊԸ- ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը մինչև հայտ ներկայացնելը (09.02.2018թ.) ***07.02.2018թ.*** կատարել է իր հարկային պարտավորությունների մարմանն ուղղված իրենից կախված անհրաժեշտ գործողությունները, այլ կերպ ասած կատարել է հարկային պարտավորությունը, որը սակայն չի իրականացվել (համապատասխան փոխանցումը չի իրականացվել) Ընկերության կամքից անկախ հանգամանքներով՝ Ընկերությանը սպասարկող բանկի աշխատակցի մեղքով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Պրիիզմա» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2018թ. թիվ 04/26-3/4486-18 գրությամբ «Պրիիզմա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00172876) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**